ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

CORRUPTION PREVENTION COMMISSION

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 07/2019

ք. Երևան **11.03.2020թ.**

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Հ. Հարությունյանի, Լ. Ալեքսանյանի, Ն. Համբարձումյանի (այսուհետ՝ Հանձնաժողով),

2020թ. մարտի 11-ին քննելով Հանձնաժողովի 2019թ. դեկտեմբերի 12-ի թիվ 07/2019 որոշմամբ ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Կարեն Կարապետյանի նկատմամբ հարուցված «Վարքագծի կանոնների առերևույթ խախտման վերաբերյալ» վարույթի գործը.

ՊԱՐԶԵՑ

I. Գործի նախապատմություն

1. 2019 թվականի դեկտեմբերի 09-ին Հանձնաժողովը ստացել է ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան Վահագն Մնացականյանի դիմումը (այսուհետ՝ Դիմումատու)՝ ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Կարեն Կարապետյանի կողմից էթիկայի կանոնների խախտման առիթով վարույթ հարուցելու վերաբերյալ:
2. Դիմումատուն մատնանշել է, որ «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի վերաբերյալ ՀՀ Հաշվքննիչ պալատը ներկայացրել է եզրակացություն, որտեղ տեղ են գտել դատողություններ և գնահատատակններ նաև «Ստանդարտ դիալոգ» ՍՊԸ-ի վերաբերյալ: Եզրակացության վերաբերյալ դիրքորոշումը ներկայացնելու համար անհրաժեշտություն է առաջացել պարզաբանումներ և տեղեկություններ ստանալ «Հաշվեքննիչ պալատ»-ից, և «Ստանդարտ Դիալոգ» ընկերության ներկայացուցիչ Վահագն Մնացականյանը դիմել է ՀՀ Հաշվքննիչ պալատ: Մասնավորապես՝ 2019 թվականի հոկտեմբերի 28-ին դիմելով Հաշվեքննիչ պալատ և հղում կատարելով ՀՀ Հաշվեքննիչ պալատի կազմած

եզրակացությանը, Դիմումատուն կոնկրետ հարցադրումներ է ներկայացրել, օրինակ՝ որոնք են «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից կանոնակարգման ենթակա ոլորտները: Որ օրենքով են դրանք նախատեսված: Ինչ ապացույցներով են հաստատվել այն փաստերը, որ չափագետ Կ.Դ և ՓԲԸ-ի 8 այլ աշխատակիցներ համատեղությամբ աշխատել են Ընկերությունում: Որ օրենքով է արգելված համատեղ աշխատանքը, օրենքի որ դրույթն էր խախտվել համատեղելի աշխատանքի առկայության դեպքում և այլն:

3. Որպես պատասխան՝ 2019 թվականի նոյեմբերի 4-ին ՀՀ Հաշվեքննիչ պալատի անդամ Կ. Կարապետյանի ստորագրությամբ ներկայացվել է պատասխան գրություն հետևյալ բովանդակությամբ (այստեղ Հանձնաժողովը ներկայացնում է Դիմումատուի համար Հանձնաժողովին դիմում ներկայացնելու համար հիմք հանդիսացած պատասխանի հատվածը). «(. . .) ինչ վերաբերում է Ձեր բազմակետ ու միևնույն ժամանակ միաբովանդակ գրությամբ հայցված տեղեկատվության տրամադրմանը, ապա հասցնում ենք Ձեր տեղեկատվությանը, որ հրապարակված ընթացիկ եզրակացության «հաշվետվություն» մասում լիարժեք ներկայացված են ամբողջական տվյալները (այդ թվում Ձեր գրությամբ հայցված): Կարծում ենք, որ եզրակացության «հաշվետվություն» և «առաջարկություններ» մասերի բովանդակությունը բառացի ընթերցելու դեպքում (պարտադիր հաշվի առնել տեքստում տեղ գտած «շուրջ» մակբայի, «կկազմեր» և «դեպքում» բառերի նշանակությունը) կփարատվեն Ձեր գրությամբ նշված բոլոր մտահոգությունները: Ավելին, քանի որ հրապարակված ընթացիկ եզրակացությունը չի պարունակում «Ստանդարտ Դիալոգ» ՍՊ ընկերության գործունեության վերաբերյալ որևէ գնահատական կամ եզրահանգում և փոխարենը վերաբերում է «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերության կողմից պետական սեփականության օգտագործման՝ տնտեսող, նպատակային և արդյունավետ լինելուն, հորդորում ենք Ձեզ, այսուհետ զերծ մնալ ՀՀ հաշվեքննիչ պալատի գործունեության մասին մտացածին վերլուծություններից ու հանրային շփման սովորույթներին ոչ հարիր հիմնազուրկ գնահատականներից(. . .):
4. Հանձնաժողովը 2019թ. դեկտեմբերի 12-ի կայացրել է «Կ. Կարապետյանի կողմից վարքագծի կանոնների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 07/2019 որոշումը:
5. 2019 թվականի դեկտեմբերի 23-ին ՀՀ Հաշվեքննիչ պալատի անդամ Կ. Կարապետյանը ներկայացրել է պարզաբանումներ, որտեղ մասնավորապես անդարադարձել է Դիմումատուի մեջբերած արտահայտություններին:

5.1. (. . .)«Ինչ վերաբերում է Ձեր բազմակետ և միևնույն ժամանակ միաբովանդակ գրությամբ հայցված տեղեկատվության տրամադրմանը, ապա հասցնում ենք Ձեր տեղեկատվությանը» նախադասության հատվածի վերաբերյալ հայտնում եմ հետևյալը. «բազմակետ և միևնույն ժամանակ միաբովանդակ» բառակապակցությունը կիրառվել է դիմողի գրության տեքստի տեխնիկական կառուցվածքը բնորոշելու նպատակով: Ավելին, «միաբովանդակ» բառը լայն կիրառում ունի գիտական ոլորտում(. . .):

5.2. (. . .)«Հասցնում ենք Ձեր տեղեկատվությանը» հատվածի վերաբերյալ հայտնում եմ, որ բառերի համանման շարադրանքը լայն կիրառում ունի օրենսդրական և ենթաօրենսդրական պրակտիկայում (օրինակ՝ ՀՀ Կառավարության 7-ը նոյեմբերի 2002 թվականի N 1923-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքների բովանդակությունը և պարտադիր պահանջների մասին տեղեկատվությունն սպառողին հասցնելու կարգը»), ուստի որևէ կերպ չի կարող ոչ բարեկիրթ և/կամ ոչ հարգալի արտահայտությունների շարքին (. . .):

5.3. (. . .)«Հաշվետվություն» և «առաջարկություններ» մասերի բովանդակությունը բառացի ընթերցելու դեպքում (պարտադիր հաշվի առնելով տեքսում տեղ գտած “շուրջ” մակբայի, “կկազմեր” և «դեպքում» բառերի նշանակությունը) կփարատվեն Ձեր գրությամբ նշված բոլոր մտահոգությունները» նախադասության հատվածի մասով: (. . .) դիմողին առաջարկել եմ պարտադիր հաշվի առնել թվային մեծություններից առաջ զետեղված եղանակիչները, առանց որոնց ներկայացված պատկերը կխեղաթյուրվի: Իսկ «կփարատվեն» բառը կիրառվել է «վերանալ» իմաստով («Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան» Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ 1969թ.) ու նույնպես չի կարող դասվել ոչ բարեկիրթ և/կամ ոչ հարգալի բառերին:

5.4. (. . .)Հորդորում ենք Ձեզ, այսուհետ զերծ մնալ ՀՀ հաշվեքննիչ պալատի գործունեության վերաբերյալ մտացածին վերլուծություններից և հանրային շփման սովորույթներին ոչ հարիր հիմնազուրկ գնահատականներից» նախադասության հատվածի մասով հայտնում ենք. Վահագն Մնացականյանի առ 28.10.2019 թ. Թիվ 19/3203 գրության մեջ տեղ գտած գնահատող/որակավորող բնույթի արտահայտությունները համահունչ չեն և որոշ դեպքերում հակասում են վերոնշված փաստաթղթերի բովանդակությունների համատեքստին և այդ իսկ պատճառով, իմ առ 04.11.2019 թ.-ի թիվ ՀՊԵ-ԿԿ-171 գրությամբ որակվել են «մտացածին» (իմաստով ոչ իրական, երևակայությամբ ստեղծված) և «հիմնազուրկ» (իմաստով՝ հիմնավորումից զուրկ), որը վերահաստատում եմ:

5.5. (. . .)«Առաջարկում ենք համապատասխան հիմնավոր ու հոդաբաշխ պահանջով դիմել պատկան մարմիններին» նախադասության հատվածի մասով հայտնում եմ հետևյալը՝ փաստաբան Վահագն Մնացականյանին (...) առաջարկել եմ պատկան մարմիններին դիմելուց ներկայացվող պահանջը ձևակերպել որոշակի և պարզորոշ՝ օգտագործելով «հոդաբաշխ» հոմանիշը (պրոֆ. Էդուարդ Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան հրատարակչություն», 1976թ.), որը որևէ կերպ չի կարող դասվել ոչ բարեկիրթ և/կամ ոչ հարգալի բառերի շարքին (. . .):

II. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովը հաստատված է համարում, որ.

6. Դիմումատուն դիմել է ՀՀ Հաշվեքննիչ պալատ իր սահմանադրական իրավունքի իրացման նպատակով: Կ. Կարապետյանը հանդես է եկել ի պաշտոնե և գործել է հանրային իշխանության գործառույթներից բխող իր պարտականությունների շրջանակներում:
7. Իր կողմից օգտագործված արտահայտությունների վերաբերյալ ներկայացված պարզաբանման մեջ Կ. Կարապետյանն անդրադարձել է իր օգտագործած բառերին, բառակապակցություններին՝ նշելով, որ օգտագործած բառերն ու արտահայտությունները ոչ բարեկիրթ և/կամ ոչ հարգալից չեն:

III. Եզրակացության ընդունման իրավական հիմքերը

1. Իր կողմից 06.03.2020թ. կայացրած թիվ 06/2019 եզրակացության շրջանակներում Հանձնաժողովը հանդես է եկել օրենքի ձևի և բովանդակության մեկնաբանության դիրքերից, որպեսզի պահպանվի կիրառվող օրենքի և դրա կողմից հետապնդվող նպատակի միջև համարժեք հարաբերակցությունը: Սույն եզրակացության համար Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում նաև գնահատել ծագած իրավահարաբերությունները ոչ միայն «վարքագծի կանոն» հասկացության համատեքստում, այլ ընդհանուր իրավունքի և դրա պաշտպանության համար հանրային պաշտոնատար անձի՝ գործող Սահմանադրությամբ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընդհանուր պարտավորությունների սկզբունքներից բխող կարգավորումների համատեքստում:
2. Այս տեսանկյունից անհրաժեշտ է տարբերակել հետևյալ հարցերը.

   1.1. Արդյո՞ք հանրային պաշտոնատար անձի կողմից գրության մեջ օգտագործած «բազմակետ և միևնույն ժամանակ միաբովանդակ գրություն», «հասցնում ենք Ձեր տեղեկատվությանը», «առաջարկում ենք

համապատասխան հիմնավոր ու հոդաբաշխ պահանջով դիմել պատկան մարմիններին» և «հորդորում ենք Ձեզ, այսուհետ զերծ մնալ ... հանրային շփման սովորույթներին ոչ հարիր հիմնազուրկ գնահատականներից» արտահայտությունների կիրառումը համատեղելի է հանրային իշխանության ներկայացուցչի կողմից մարդու և քաղաքացու իրավուքներն ու ազատությունները հարգելու և պաշտպանելու սահմանադրական պարտականության հետ:

1.2.Արդյո՞ք ներկայացված արտահայտությունները գործող օրենսդրության շրջանակներում հնարավոր է որակել որպես հանրային պաշտոնատար անձի կողմից «վարքագծի կանոնի» խախտում և այդ հիմքով կարգապահական պատասխանատվության ենթարկելու պահանջ առաջադրել:

3. ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը ***<u>հանրային իշխանության պարտականություններն են:</u>*** Նույն հոդվածի համաձայն՝ հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք: Այս դրույթից բխում է, որ հանրային իշխանությունը սահմանափակվում է մարդու իրավունքով, և մարդու իրավունքներն ու ազատությունները հանդես են գալիս որպես իրավակարգավորիչ, իրավաբանական պահանջներ, որոնք ուղղորդում են պետաիշխանական գործառույթների իրականացումը(տես Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, 2010թ., էջ 70): Հանրային ծառայողները՝ որպես պետաիշխանական գործառույթ իրականացնող սուբյեկտներ, քաղաքացիների հետ ի պաշտոնե հարաբերվելիս պետք է զերծ մնան վարքագծի այնպիսի հնարավոր դրսևորումից, որոնք անձի մոտ կարող են առաջացնել հանրային պաշտոնատար անձի կողմից քաղաքացու շահերն անտեսելու, պետական իշխանության և կոնկրետ հանրային ծառայողի գերակայությունն ընդգծելու, քաղաքացու/մարդու արժանապատվությունը նսեմացնելու, ինչպես նաև իրավունքները սահմանափակելու հավանականություն:

4. ՀՀ Փաստաբանության մասին օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասին համաձայն՝ փաստաբանն ***իրավունք ունի*** դիմելու պետական, տեղական ինքնակառավարման մարմիններին, անհատ ձեռնարկատերերին և իրավաբանական անձանց (այսուհետ՝ տնտեսավարող սուբյեկտներ)՝ իրավաբանական օգնություն ցույց տալու համար անհրաժեշտ փաստաթղթեր (տեղեկություններ) ստանալու պահանջով: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները ***<u>պարտավոր են</u>*** տասնօրյա

ժամկետում փաստաբանին տրամադրել պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները)(. . .): Այսինքն՝ Դիմումատուի համար առկա է իր իրավունքի իրացման հնարավորությունը, և այդ իրացման հիմքով ծագած իրավահարաբերության դեպքում հանրային իշխանության ներկայացուցիչն արդեն իսկ կաշկանդված է մարդու իրավունքները և ազատությունները հարգելու ու պաշտպանելու սահմանադրական պարտականությամբ:

5. Հղում կատարելով ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածին՝ Դիմումատուն Հանձնաժողովին հասցեագրված իր դիմումում նշել է, որ ՀՀ Հաշվեքննիչ պալատի անդամի կողմից նման արտահայտությունների կիրառումը չի կարող բխել ՀՀ Սահմանդրոթյունից: Դիմումատուն մատնանշել է նաև, որ ներկայացված արտահայտությունների օգտագործումից բխում է, որ Հաշվեքննիչ պալատի անդամը դրսևորել է իր պաշտոնին ոչ վայել վարքագիծ, և նման արտահայտություններով փաստաբանին դիմելը չի կարող համարվել բարեկիրթ և հարգալից վերաբերմունք:
6. ՀՀ Հաշվեքննիչ պալատի անդամ Կ. Կարապետյանը իր պարզաբանումներում ներկայացված հակափաստարկենրով փորձել է մեկնաբանել, որ օգտագործված բառերն ու արտահայտությունը որևէ կերպ չի կարող դասվել ոչ բարեկիրթ և/կամ ոչ հարգալի բառերի շարքին: Այնուամենյանիվ, Հանձնաժողովը գտնում է, որ օգտագործած բառերն ու արտահայտությունները պատասխան գրության ընդհանուր համատեքստում անձի մոտ առաջացնում են արհամարվածության, վիրավորվածության, ստորադասության զգացողություն: Հետևաբար, պատասխան գրությունն իր բնույթով անհարիր է հանրային ծառայողի կարգավիճակին, և անհամատեղելի է հանրային ծառայողի կողմից մարդու և քաղաքացու իրավունքի նկատմամբ հարգանքի և պաշտպանության սահմանադրական պարտավորության կատարման, Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքով սահմանված բարեկրթության և հարգալիության սկզբունքների հետ:
7. Այս հիմքով, անկախ վարքագծի կանոնների առկայությունից, Հանձնաժողովը գտնում է, որ անթույլատրելի է հանրային իշխանության ներկայացուցչի կողմից իր պաշտոնական պարտականությունների իրականացման շրջանակներում այնպիսի վարքագծի դրսևորումը՝ արտահայտությունների օգտագործումը, որոնք ակնհայտորեն անտեսում են մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները հարգելու և պաշտպանելու հանրային իշխանության պարտականությունը:
8. Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ նաև հնչեցված արտահայտությունները և պատասխան գրությունը որպես վարքագծի կանոնի խախտում որակելու և այդ հիմքով հնարավոր պատասխանատվության հարցին:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ հոդվածի համաձայն՝ Հանձնաժողովն ընդունում է եզրակացություն (. . .)Վարքագծի կանոնների խախտման առկայության կամ բացակայության մասին:
Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնները սահմանվում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ընդունած վարքագծի կանոնագրքով: Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անկախ պետական մարմինների անդամները համարվում են ինքնավար մարմնի անդամներ: Հաշվեքննիչ պալատի անդամը համարվում է ինքնավար մարմնի անդամ (տես նաև Հաշվեքննիչ պալատի մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը): Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ վարքագծի կանոնների խախտումը կարող է առաջացնել կարգապահական պատասխանատվություն: (…) Ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ կարգապահական պատասխանատվության վերաբերյալ դրույթները կարող են կիրառվել օրենքով նախատեսված դեպքերում: Չնայած ներկայացված օրենսդրական կարգավորումներին՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ ինքնավար մարմնի անդամների կարգապահական պատասխանատվության տեսակ/ներն օրենսդրությամբ սահմանված չէ:
Բացի այդ, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ (. . .) ***վարքագծի կանոնների խախտման*** (. . .) իրավիճակի առկայության դեպքում Հանձնաժողովն իրավասու մարմնին առաջարկում է կարգապահական պատասխանավության ենթարկել պաշտոն զբաղեցնող անձին(. . .): Այսինքն՝ հանրային ծառայողի նկատմամբ օրենքով սահմանված կարգապահական պատասխանատվության կիրառման համար կարող են հիմք հանդիսանալ հանրային վարքագծի կանոնի խախտումը: Հանրային ծառայության մասին ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ հանրային ծառայողի վարքագծի տիպային կանոնները սահմանում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը: Նույն օրենքի 54-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ վարքագծի կանոնագիրքը, ինչպես նաև հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները պետք է ընդունվեին (սահմանվեին) մինչև 2018 թվականի հոկտեմբերի 1-ը, մինչդեռ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը ձևավորվել է 2019 թվականի նոյեմբերի 19-ին: Հանձնաժողովն արձանագրում է, որ Դիմումատուի կողմից ՀՀ Հաշվեքննիչ պալատ դիմելու պահին՝ 2019 թվականի հոկտեմբերի 28-ին, հանրային ծառայողների վարքագծի կանոնները սահմանված չեն եղել և չեն գործել:

IV. Եզրահանգում.

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը եզրակացնում է.

ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Կարեն Կարապետյանի կողմից ՀՀ Փաստաբանների պալատի անդամ փաստաբան Վահագն Մնացականյանին հասցեագրված պատասխան գրությունը, դրանում օգտագործած արտահայտությունները չեն արտահայտում հանրային ծառայողի կողմից մարդու իրավունքներն հարգելու սահմանադրական պարտականության, բարեկրթության և հարգալիության սկզբունքի էությունը, *այնումենայնիվ*, հանրային ծառայողի վարքագծի կանոնների բացակայության պարագայում Հանձնաժողովն իրավաչափ հիմք չունի այն որակել *որպես վարքագծի կանոնի խախտում* և այդ հիմքով առաջարկել Կարեն Կարապետյանի նկատմամբ կարգապահական պատասխանատվություն կիրառել:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ **ՆԱՐԵԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**

ԼԻԼԻԹ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ